Տեղեկատվություն

Եվրոպայի խորհրդի Տեղական և շրջանային իշխանությունների Կոնգրեսի 2025թ. աշխատանքներին երիտասարդ պատվիրակի կարգավիճակով մասնակցության պայմանների մասին

Եվրոպայի խորհրդի (ԵԽ) Տեղական և շրջանային իշխանությունների Կոնգրեսը (Կոնգրես) հղումը՝ https://www.coe.int/en/web/congress/home, հանդիսանալով ԵԽ հիմնական մարմիններից մեկը և ԵԽ անդամ և ԵԽ հետ համագործակցող պետությունների Տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) վեհաժողով՝ համադրելի է ԵԽ խորհրդարանական վեհաժողովին՝ ԵԽԽՎ-ին: Կոնգրեսի աշխատանքները տեղի են ունենում Ստրասբուրգում (Ֆրանսիա) գտնվող Եվրոպայի խորհրդի կենտրոնակայանում:

Կոնգրեսում ներկայացված են ԵԽ 46 անդամ երկրների ավելի քան 130.000 ՏԻՄ-երից 612 պատվիրակներ, նստաշրջանները տեղի են ունենում տարին երկու անգամ՝ մարտին և հոկտեմբերին: Բաղկացած է երկու՝ Տեղական իշխանությունների և Շրջանային իշխանությունների պալատներից:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության վարչատարածքային կառուցվածքը՝ Հայաստանը Կոնգրեսում ներկայացված է Տեղական իշխանությունների պալատում, որը գումարվում է ԵԽԽՎ լիագումար նիստերի դահլիճում:

2014 թվականից «Երիտասարդացնելով քաղաքականությունը» նախաձեռնության շրջանակներում՝ Կոնգրեսը հնարավորություն է ընձեռում ԵԽ աշխատանքով և տեղական իշխանությունների դերով հետաքրքրված երիտասարդ ակտիվիստներին, ուսանողներին՝ Կոնգրեսի երիտասարդ պատվիրակի կարգավիճակով մասնակցելու Կոնգրեսի աշխատանքներին, տեսակետ հայտնել, փաստաթղթեր մշակել և օրակարգային հարցերի շուրջ մտքեր փոխանակել Կոնգրեսի անդամների հետ:

ԵԽ Կոնգրեսում երիտասարդ պատվիրակներից պահանջվում է նաև նստաշրջանների միջանկյալ ժամանակահատվածում սեփական նախագծեր մշակել՝ ուղղված ՏԻՄ երիտասարդական ոլորտի բարեփոխումներին:

<u>Մեկամյա մասնակցություն ԵԽ Կոնգրեսի աշխատանքներին</u>

ԵԽ Կոնգրեսի երիտասարդ պատվիրակի դերը եզակի հնարավորություն է միջազգային փորձ ձեռք բերելու, այլ պատվիրակների հետ շփվելու, ինչպես նաև երիտասարդությանն առնչվող քաղաքականության հեռանկարները Կոնգրեսի օրակարգ բերելու համար:

<u>Երիտասարդ պատվիրակների մասնակցությունը</u>

ԵԽ Կոնգրեսի նստաշրջաններին

Տարին երկու անգամ գումարվող Կոնգրեսի նստաշրջանների ընթացքում երիտասարդ պատվիրակները տեղական և շրջանային իշխանությունների ներկայացուցիչների՝ Կոնգրեսի պատվիրակների հետ մասնակցում են լիագումար նստաշրջաններին և հատկացված տեղեր ունեն նիստերի նույն դահլիճում:

Յուրաքանչյուր նստաշրջանից առաջ ԵԽ Կոնգրեսի քարտուղարությունը երկօրյա նախապատրաստական հանդիպում է կազմակերպում երիտասարդ պատվիրակների համար, որը ճանաչողական բնույթ է կրում:

Երիտասարդ պատվիրակները պետք է ունենան հանրային ելույթների հմտություններ, նախընտրելի է՝ նաև փորձ, ինչպես նաև կարողանան համառոտ ելույթներ պատրաստել՝ ԵԽ Կոնգրեսում գործածվող լեզուներից մեկով (անգլերեն, ֆրանսերեն, իտալերեն, իսպաներեն, հունարեն) և ունակ լինեն վերլուծել քաղաքական փաստաթղթերը:

Երիտասարդ պատվիրակները պետք է հանձնառություն ստանձնեն **պարտադիր կերպով մասնակցելու ԵԽ Կոնգրեսի 2025թ. երկու նստաշրջաններին՝**

- 2025թ. մարտի 22-ից (ժամը 19.00-ից) մինչև մարտի 27-ի նիստը (ժամը 17:00)
- 2025թ. հոկտեմբերի 25-ից (ժամը 19:00-ից) մինչև հոկտեմբերի 30-ի նիստը (ժամը 17:00)

Նախագծերի մշակում ԵԽ Կոնգրեսի նստաշրջանների միջանկյալ շրջանում

2025թ. ԵԽ Կոնգրեսի մարտի և հոկտեմբերի նստաշրջանների միջանկյալ ժամանակահատվածում երիտասարդ պատվիրակներից պահանջվելու է տեղական ու շրջանային կառավարման ոլորտի երիտասարդությանն առնչվող նախագծեր մշակել, որոնք բխելու են Կոնգրեսի աշխատանքների առաջնահերթություններից և թեմատիկ քննարկումներից: Տվյալ նախագծերը կարող են լինել համաժողովների, հեռախոսային հավելվածների, փոդքասթների և այլ ձևաչափի նախաձեռնություններ: Ի դեպ, ուղեցույց կարող են ծառայել 2024թ. երիտասարդ պատվիրակների կողմից մշակված նախագծերը, որոնք հասանելի են https://search.coe.int/cm?i=0900001680b1fdd4 հղումով:

Նախագծերի մշակման փուլում երիտասարդ պատվիրակներին աջակցելու են մենթոր-վերապատրաստողները՝ տեղեկատվական փաստաթղթեր և այլ նյութեր տրամադրելով: Նախագծի/նախագծերի մշակման համար ԵԽ Կոնգրեսը ֆինանսավորում չի տրամադրում, փոխարենը երիտասարդ պատվիրակներին տեղական կամ շրջանային իշխանությունների հետ աշխատանքային շփումներ հաստատելու հնարավորություն է ընձեռվում:

Այլ միջոցառումներ

Որոշ երիտասարդ պատվիրակներ կարող են մասնակցել ԵԽ Կոնգրեսի կոմիտեների նիստերին, սեմինարներին, համաժողովներին կամ ԵԽ այլ միջոցառումներին, որոնք կազմակերպվում են ինչպես Ստրասբուրգում, այնպես էլ ԵԽ անդամ երկրներում:

<u>Պարտադիր են հետևյալ որակները.</u>

- Լինել անկաշկանդ շփումներում, հանձնառու և նպատակասլաց,
- Դիմումների ընդունման վերջնաժամկետի պահին լինեն 18-ից 30 տարեկան,
- Բնակվեն ԵԽ անդամ երկրներից մեկում և ունենան տվյալ երկրի անձնագիր,
- Տեղական և շրջանային մակարդակում ակտիվ ներգրավվածություն ունենան երիտասարդական աշխատանքներում,
- Հնարավորություն ունենան ամբողջովին ներգրավել ԵԽ Կոնգրեսի աշխատանքներում, ներառյալ՝ տեղական նախագծերի պատրաստման գործընթացում,
- Հետաքրքրված լինեն և ակտիվորեն կարողանան մասնակցել Տեղական և տարածաշրջանային մակարդակում քաղաքականության մշակմանը,
- Ունենան բանավոր և գրավոր խոսքի լավ հմտություններ, ինչպես նաև հանրային ելույթների կարողություն,
- Ունակ լինեն աշխատել բազմամշակութային թիմում,
- Սահուն խոսեն անգլերեն լեզվով:

<u>ԵԽ Կոնգրեսի երիտասարդ պատվիրակները չպետք է</u>.

- հանդիսանան ՏԻՄ ընտրություններով ընտրված ներկայացուցիչներ, պատգամավորներ,
- նախկինում եղած լինեն ԵԽ Կոնգրեսի երիտասարդ պատվիրակ:

<u>Դիմումների ընդունման գործընթացը և մասնակիցների ընտրությունը</u>

ԵԽ Կոնգրեսի 2025թ. գարնանային և աշնանային նստաշրջաններին երիտասարդ պատվիրակի կարգավիճակով մասնակցել ցանկացողները պետք է իրենց թեկնածությունը ներկայացնեն առցանց լրացվող և ուղարկվող դիմումով, որը հասանելի է հետևյալ հղումով՝
https://forms.office.com/Pages/ResponsePage.aspx?id=grBJPtViSUiIsIbtUZKH0mPCg82WLCICniQ4IkjPDPIUNUtHNVVTNksyN1hYRFdBMkFDR0VZMlhaNy4u :

Դիմումների ընդունման վերջնաժամկետը **2024թ. դեկտեմբերի 31-ն է**:

Դիմումների հետ մեկտեղ դիմումատուները **պարտադիր կերպով մինչև 2025թ. փետրվարի 28-ը** պետք է նաև 30 վայրկյան տևողությամբ կարճ տեսանյութ ուղարկեն, որի վերնագիրը պետք է ներառի միայն դիմումատուի անունն ու երկրի անվանումը: Տեսանյութում դիմումատուները չպետք է իրենք իրենց ներկայացնեն, այլ պատասխանեն դիմում հայտում շարադրված հարցերին:

Երիտասարդ պատվիրակներն ընտրվելու են ԵԽ Կոնգրեսի ընտրական խորհրդի կողմից, որտեղ ընդգրկված են լինելու Երիտասարդության հարցերով Կոնգրեսի խոսնակը, վերապատրաստողները և երիտասարդության հարցերով ԵԽ խորհրդատվական խորհրդի անդամները: **Ընտրության արդյունքների մասին դիմումատուները կտեղեկացվեն 2025թ. փետրվարի 7-ին:**

Ճանապարհի և կեցության ծախսերը

Երիտասարդ պատվիրակների ճամփորդության և այլ ծախսերը հոգում է ԵԽ Կոնգրեսը: Գիշերակացն ապահովվելու և վճարվելու է ԵԽ Կոնգրեսի քարտուղարության կողմից, մեկտեղանի կամ համատեղ սենյակներում՝ ըստ հասանելիության: Կազմակերպիչները չեն կարող հոգալ այլ վայրում գիշերակացի ծախսերը:

Հավելյալ հարցերի համար կարելի է կապ հաստատել հետևյալ էլեկտրոնային հասցեով՝ congress.youth@coe.int: